Վերապատրաստող կազմակերպություն

# ՀՀ ԿԳՄՍ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** <<Ձևավորող գնահատման ազդեցությունը նյութի յուրացման բարելավման վրա՝ համագործակցային ուսուցման ու տարբեր մակարդակներով ուսուցման տեխնոլոգիաների միջոցով»

**ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝** <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>>ՊՈԱԿ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Համիկ Բեյբության
**ՈՒՍՈՒՑԻՉ՝** Արմենուհի Կիրակոսյան
**ԴՊՐՈՑ՝** Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ

**2022թ**
**Մարտունի**

# Բովանդակություն


Ներածություն ........................................................................................................ 3

Հետազոտական համատեքստ ..................................................................................... 4

Գործնական համատեքստ .......................................................................................... 5

Հետազոտության ընթացք .......................................................................................... 9

Տվյալների մշակում և վերլուծություն ....................................................................... 131

Եզրակացություն ..................................................................................................... 15

Գրականության ցանկ ................................................................................................ 14

Դասի պլան 1 .......................................................................................................... 175

Դասի պլան 2 .......................................................................................................... 197

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն ներառում է սովորողի յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժական և հոգեբանական աշխատանքները մշակութային բարոյական, ազգային ու համամարդկային արժեքները:

Նրա բաղադրիչներն են՝

- գիտելիքի համակարգ
- կարողություններ և հմտություններ
- արժեքային համակարգ:

Սովորողների գիտելիքներն ու կարողություններն առավել և ամբողջական տեսանելի և կիրառելի դարձնելու համար կիրառվում է գնահատումը:

**Գնահատումը** լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների և կարողությունների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:

Ինչպես գիտենք գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի

- ➢ արդարության
- ➢ հուսալիության
- ➢ անկողմնակալ ության
- ➢ հավաստիությ ան
- ➢ հիմնավորվա ծության
- ➢ մատչելիութ յան
- ➢ թափանցիկության սկզբունքների հիման վրա:
- ➢

Ուսուցման արդյունքների գնահատումը ենթադրում է հաղորդակցության խմբային կարողությունների ձևավորման և տիրապետման չափանիշների ճշգրտում՝ խմբի համապատասխանության աստիճանը հաղորդակցության թեմային, իրադրության նպատակին, խմբի արագություն և այլն:

Գոյություն ունեն

- Ձևավորող(ուսուցանող)
- Միավորային գնահատման համակարգեր

Ուսուցանող կամ ձևավորող գնահատումը սովորողի ուսուցման ընդացքում տեղեկությունների հավաքման և արժևորման միջոցով կատարվող աշխատանքներ են:
**Հետազոտության նպատակն** այն է, որ բացահայտեմ ձևավորողի գնահատականի ազդեցությունը նյութի յուրացման բարելավման վրա՝ նշելով հաջողություններս ու թերություններս:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների առջև դրված խնդիրների համատեղ լուծումն է՝ արդյունքները բարելավելու նպատակով:
Ձևավորող գնահատումը աշակերտի ակտիվ մասնակցությունն է:

1. Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:
2. Սովորողների մասնակցության ապահովում:
3. Հետադարձ կապի ապահովում:
4. Սովորողի ուսումնական գործընթացի շտկում:

Ձևավորող գնահատման միջոցներն են՝

- ✓ Բանավոր հարցում,
- ✓ Տնային աշխատանք,

- ✓ Հայտորոշիչ թեստ,
- ✓ Քննարկում,
- ✓ Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,
- ✓ Համագործակցային աշխատանք,
- ✓ Գործնական աշխատանք (պատի թերթ, սահիկահանդես և այլն)

Կրթության առջև դրված են որոշակի նպատակներ և դրանք գնահատվում են ելնելով այդ նպատակադրումների իրականացման աստիճանից:

Բենջամին Բլումն առանձնացնում է գնահատման վեց բաղկացուցիչ՝

- Գիտելիք,
- Ընկալում
- Կիրառում,
- Վերլուծում,
- Համադրում,
- Գնահատում կամ արժևորում, որի ժամանակ սովորողը կարողանում է նկարագրել, բացատրել, մեկնարկել, հիմնավորել, եզրակացնել, ամփոփել, գնահատական տալ: Ձևավորող գնահատումը կարելի է ներկայացնել այսպիսի գծապատկերով՝

Դասավանդում ➡ ուսումնառություն ➡ ուսուցանող գնահատական
➡ անդրադարձ ➡ բարելավված ուսուցում:

Այս գնահատման նպատակն է ճշգրտել դասավանդվող նյութի բովանդակությունը, խորությունը, դասավանդման արդյունավետ մեթոդները, շարունակաբար բացահայտել ուսուցման նյութի յուրացման պատկերը, ձևավորել ինքնագնահատման կարողությունը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Իմ աշխատանքի համար ընտրել եմ VI դասարանը՝ հաշվի առնելով, որ ձևավորող գնահատականը կարող է արդյունավետ

օգտագործել միջին դպրոցում: Ես ընտրել եմ ուսուցման խմբային տարբերակը՝ ձևավորելով խառը խմբեր, որոնցից յուրաքանչյուրում կա թույլ մոտիվացիայով աշակերտ: Հետազոտական աշխատանքս կազմակերպելու համար ընտրել եմ հետևյալ դասի տիպերը՝

ա)համակցված դաս

բ)դաս-փոխուսուցում

գ)բաց մտքերի դասավանդման դաս

Օգտագործելու եմ

1. **Համագործակցային** ուսուցման տեխնոլոգիա,
2. Տարբեր մակարդակներով ուսուցման տեխնոլոգիա: Յուրաքանչյուր դասի համար՝ հաշվի առնելով, որ VI դասարանում պետք է ուշադրություն դարձնել մտքերի ճիշտ դասավորությանը, խոսքի ճիշտ և գրագետ կառուցմանը, խոսքի զարգացմանն ու ազատ շարադրանք գրելու կարողությանը ակնկալելով վերջնարդյունք, որ աշակերտը պիտի կարողանա ճիշտ և տեղին օգտագործել բառերն ու բառակապակցությունները, շարադրել խոսքը՝ թույլ տալով,ոճական հնարավորինս քիչ սխալներ, կարողանա հիմնավորել, արտահայտել մտքերը և վերլուծել դրանք:

6-րդ դասարանում հետազոտությանս նյութը համընկավ Եղիշե Չարենցի <<Մորս համար գազել>> և Հովհաննես Շիրազի <<Մայրս փոքրիկ, մայրս խեղճ>>բանաստեղծությունների հետ:

Այս բանաստեղծությունները շատ սիրելի և դյուրընկալելի է աշակերտների համար: Ուսումնասիրելով այս դասերը՝ ես իմ առջև դրել եմ նպատակներ՝

- ընկալել տալ ընտանեկան հարաբերություններում բարձր արժեքները
- նպաստել անձի ձևավորման գործում ընտանիքի դերը և նշանակությունը
- արժևորել մոր կարևոր և անկրկնելի դերը երեխաների կյանքում

- ընկալել տալ բառերի ճիշտ ընտրության կարևորությունը:

Այս ամենից ես ակնկալում եմ հետևյալ **վերջնարդյունքները`**

1. վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը,
2. գնահատողական վերաբերմունք դրսևորել հեղինակների զգացմունքների , վերհուշերի հանդեպ:Հատուկ ուշադրություն եմ դարձնելու ինքնագնահատմանը և փոխադարձ գնահատմանը, հնարավորություն եմ տալու ազատ արտահայտվել , վերլուծել , գրել փոքրիկ շարադրություններ մայրերի մասին:Կազմելու եմ թեստեր, որոնք ներառելու են հեղինակների կենսագրությունից հատվածներ, նրանք համեմատելու և զուգորդելու ենք հեղինակների մտածելակերպերի, զգայական աշխարհի հետ փորձելով զուգահեռներ անցկացնել անձնական կյանքում տեղի ունեցած իրադարձությունների և մոր հանդեպ տածած անսահման սիրո հետ:

Աշակերտները փորձում են հայտնել սեփական կարծիքները, տեսակետները, օգնում են խմբում գտնվող թույլ մոտիվացիա ունեցող աշակերտներին արտահայտելու մտքերը:Իմ նպատակը նաև գիտելիքների ստուգումն է` այսինքն որքանով են սովորել տվյալ նյութը, քանի որ ձևավորող գնահատականը սովորելու գնահատականն է: Աշակերտները խմբերում կատարում են տրված թեստը, քննարկում են և **համագործակցային** աշխատանքով ներկայացնում են խմբի կատարած առաջադրանքը` նկարագրելով խմբի յուրաքանչյուր անդամին, գնահատում են միմյանց, ապա իրենց կազմած հարցադրումներով փոխադարձ գնահատում են մյուս խմբերին:

Բնականաբար, գնահատման այս ձևում երևում է հետադարձ կապի առկայությունը: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկմանը:

Այս դեպքում սովորողը համեմատում է ինքն իր հետ` պարզելով իր առաջընթացը: Գնահատման արդյունքների հիման վրա

հետադարձ կապով ուսուցիչը գնահատում է պետական չափորոշչի, ուսուցման ծրագրերի ու ուսուցման մեթոդների արդյունավետությունը, կատարում է իրավիճակից բխող փոփոխություններ:
Ձևավորող գնահատմամբ ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը, որը հնարավորություն է տալիս աշակերտին հասկանալու, թե իր ուսումնական աշխատանքներում ինչ նվաճումների է հասել, ինչ բացթողումներ է ունեցել: Այն ստեղծում է սովորելու նոր խթաններ:
Ձևավորող գնահատումը փորձելու եմ կիրառել ամբողջ դասի ընթացքում՝ ներառելով հարցադրումներ, թեստեր՝ մատնացույց անելով այն անելիքները, որոնց վրա պիտի աշխատեն խումբը կամ խմբերը:
Պետք է ոչ միայն իմանալ ինչը շտկել, այլ ինչպես շտկել: Այն պետք է լինի կառուցողական ոչ թե քննադատական, որպեսզի աշակերտները վստահեն սեփական ուժերին:
Այս դասարանում փորձում եմ առավել ապես ուշադրություն դարձնել փոխուսուցումներին, մտքերի ազատ արտահայտություններին, դիտարկում եմ ցածր կարողունակություն ունեցող աշակերտներին, ուսուցումը կազմակերպում եմ տարբեր մակարդակներով:
Ձևավորող գնահատումն օգտագործելու համար պետք է պարզեմ, թե որքանո՞վ է սովորողը հասկացել անցած նյութը, ո՞ր առաջադրանքն է հեշտ, ի՞նչ անելիքներ ունեմ ես, ի՞նչ պետք է փոխեմ դասավանդման մեթոդներում:
Ձևավորող գնահատման **օբյեկտը** սովորողի գործունեությունն է: Աշակերտը պատասխանատվություն է ստանձնում ուսումնառության համար:
Գնահատման ձևանմուշները, յուրացման թեստերը, ինքնագնահատումները փոխադարձ գնահատումները, ուսուցանող, հայտորոշիչ հարցադրումները առաջընթացը խթանելու արդյունավետռազմավարություններ են:
Այս առումով ճիշտ կազմված առաջադրանքները և դրանց

համապատասխան ձևավորող գնահատումները օգնում են սովորողների վերլուծական հակումները զարգացնելուն, նպաստում բարձր մակարդակի մտածողության զարգացմանն ու կիրառմանը իրական կյանքի իրավիճակներում:
Անպայման առաջադրանքները կազմելուց պետք է նշվի նպատակը, առաջադրանքի բնույթը, սահմանվի որոշակի ժամանակ: Այս արդյունքները տեղեկություն են տալիս նաև սովորողներին իրենց իսկ ուսումնական առաջընթացի մասին: Ցանկալի է ընդգրկել կարճ պատասխանով առաջադրանքների համապատասխանեցում կամ համակցում տվյալ թեմայի հետ: Ընդհանրապես առաջադրանքները բազմակի ընտրության տարբերակներ են, որոնք նույնպես բարելավում են նյութի յուրացման գործընթացը:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ**

Այս շրջանում անցկացրել եմ երկու դաս

1. <<Մորս համար գազել>> բանաստեղծությունն երկու ժամ: (Հավելված 1): Առաջին ժամին կարդալ, երկրորդ ժամին անգիր: Առաջին դասին ես նպատակ եմ դնում ուշադրություն դարձնել գեղեցիկ ասմունքին, բառերի բացատրությանը` ակնկալելով վերջնարդյունքը, երբ աշակերտները կարողանան ներկայացնել բանաստեղծության բովանդակությունը արձակ շարադրանքով, կարողանան կառուցել գեղեցիկ խոսք:

Առաջին դասին ես հասկացա, որ դեռևս ունեմ անելիքներ հատկապես ազատ շարադրանքի զարգացման հետ, չնայած արժևորում էի նրանց խոսքը, գովեստի խոսքեր էի ասում, բայց, օգտագործելով հետադարձ կապը, մատնացույց է անում նրանց թույլ և ուժեղ կողմերը: Աշակերտները բանաստեղծությունն արտասանում էին անգիր, փորձում էին ներկայացնել առոգանությամբ, բայց արձակ շարադրանքին անցնելիս, շատերը դժվարանում էին գեղեցիկ խոսք կազմել, որը մատնացույց էր անում, որ ես աշխատելու պարտադիր պայման ունեմ, շտկելու

թերությունները, քանի որ VI դասարանում անել իքները շատէին:

Աշակերտները խոսում են կրկնվող արտահայտությունների մասին՝ <<Մա՛յրիմ, անուշ ու անգին>>, նշում են որ մայրը ամենանվիրական, ամենասուրբ էակն է իրենց կյանքում:
Խոսում են մոր տխրության պատճառի մասին, ներկայացնում են նոր սովորած բառերը, վերլուծում են <<լուռ ու տխուր նստել ու>> պատճառների մասին, փորձում են մեկնաբանել և եզրահանգումներ անել: Նրանք անում են ընդանրացումներ, նշում են որ երեխաները ինչ տարիքում էլ որ լինեն, երբեք չպետք է նեղացնեն, բարկացնեն մայրերին:

Դասը հաջողված էր, բայց կային մասնակի թերացումներ, որոնց մասին վերևում նշեցի:
Կատարեցին կարճ թեստային աշխատանք, բայց կային աշակերտներ, որոնց հետ պետք է տանեմ անհատական աշխատանք:

Երկրորդ դասին ուսումնասիրում ենք նոր հեղինակ՝ Հովհաննես Շիրազ <<Մայրս փոքրիկ, մայրս խեղճ>> բանաստեղծությունը՝ դարձյալ երկու ժամով:(Հավելված 2)
Առաջին ժամի համար նպատակ էի դրել, որ աշակերտներն իմանան հատվածներ Հովհաննես Շիրազի կենսագրությունից, իմանան Հովհ. Շիրազի մորը նվիրված բանաստեղծական շարքի մասին, իմանան բանաստեղծության բովանդակությունն՝ ակնկալելով վերջնարդյունքներ, որ կարողանան կենսագրությունից հատվածներ ներկայացնել, խոսել <Հուշարձան մայրիկիս>> բանաստեղծական շարքի մասին:

Այս դասը նույնպես անցկացնում էի նույնպես խմբային եղանակով: Դարձյալ խմբերին տվեցի հարցադրումներ, որոնց պատասխանը ակնկալում էի երեք րոպե հետո: Դրանից զատ դասը հանձնարարվեց ընթերցել, գտնել անծանոթ բառերը, բացատրել, կարդալ ճիշտ և գեղեցիկ: Ես փորձում էի ուղղորդել նրանց: Խմբերում կային աշակերտներ ովքեր լրացուցիչ տեղեկություններ ներկայացրեցի Հովահննես Շիրազի մասին, նշեցին որ օգտվել են համացանցից, արտասանեցին <<Հուշարձան

մայրիկիս>> շարքից մի քանի բանաստեղծություններ:

Այս դասաժամին ես ուշադրություն դարձրեցի աշակերտների յուրացման աստիճանի վրա, որի ժամանակ ուշադրությունս գրավեցին այն աշակերտները, ովքեր չեն ուզում կամ չեն կարողանում սովորել:

Այս դասին ես առաջարկեցի աշակերտներին ինքնագնահատական տալ խմբի աշխատանքին և յուրաքանչյուրն ինքն իրեն: Նրանք տալիս էին ինքնագնահատականներ, գնահատում էին խմբի յուրաքանչյուր անդամի աշխատանքը՝ լավ, միջին, վատ, որոնց վերաբերյալ տրվում էին հիմնավորումներ և բացատրություններ:

Այս դասին պարզեցի, որ աշակերտներն ինքնուրույն շտկումներ են ուզում անել խմբերում, ինքնուրույն վերլուծել, գտնել սեփական սխալները, օգնել թույլ մոտիվացիա ունեցող ընկերներին, հիմավորել իրենց սխալներն ու թերացումները: Ձևավորող գնահատումը արդեն հասանելի է դառնում աշակերտներին: Այս դասի համար պատրաստում եմ երկու սանդղակ (ռուբրիկ), որտեղ նշվում է փոխադարձ գնահատումները, երբ խմբերը գնահատում են միմյանց և երեք աշակերտների համար կազմում եմ սանդղակ՝ դիտարկելով նրանց:

Այս դասին ես նպատակ եմ դնում զարգացնել արտահայտիչ արտասանելու տեխնիկան, իմանալ Շիրազի մանկատանը հայտնվելու պատճառները, համեմատել Հովհաննես Շիրազի և Եղիշե Չարենցի բանաստեղծությունները:

Վերջնարդյունքում պիտի կարողանան արտահայտիչ և գեղեցիկ ասմունքել, հիշել Շիրազի բանաստեղծությունն հոր մասին, հետևություն անել, որ հենց Շիրազի հոր մահն անդրադարձավ նրա մանկատանը հայտնվելուն:

Խմբերը մնում են նույնը, աշակերտները աշխատում առոգանությամբ արտասանել բանաստեղծությունը, պատմում են տեղեկությունները Շիրազի և Շիրազի մոր հանդիպման մասին՝ նշելով հետաքրքիր մանրամասներ և լրացուցիչ տեղեկություններ:

Յուրաքանչյուր խմբում աշակերտների մեջ առաջանում է հետաքրքիր մրցակցություն և մեծ ցանկություն, որ արտասանեն

մեկը մյուսից լավ: Եվ շատերի մոտ հաջողվում է, մնացածներն էլ փորձում են հասնել ընկերներին: Ես շարունակում եմ իմ դիտարկումները սանդղակի օգնությամբ: Գովեստի խոսքեր եմ ասում լավ ասմունքողներին, մյուսներին համար շտկումներ եմ անում, ակնկալելով, որ նրանք նույնպես կկարողանան արտասանել գեղեցիկ:

Աշակերտները նույնպես կատարում են դիտարկումներ, ներկայացնում են ընկերների ուժեղ և թույլ կողմերը, կատարում են փոխադարձ գնահատում: Ուրախալի է, որ աշակերտների մոտ նկատվում է ոգևորություն, որ նրանք կարողանում են տալ հիմնավոր և անկողմնակալ գնահատականներ: Ձևավորող գնահատումն իր դրական ազդեցությունն թողեց աշակերտների վրա, հատկապես այն շատ էր ոգևորել թույլ կարողունակություն ունեցող աշակերտներին: Այս ամենը շատ շոշափելի էր, երբ միմյանց հետ համեմատվում էին բանաստեղծությունները: Բոլոր աշակերտներ ցանկանում էին իրենց մտքերն արտահայտել, հիմավորումներ անել և ներկայացնել իրենց ձևավորող գնահատականը:

Խմբերը այս դասաժամին արդեն կարողանում էին ճիշտ և հստակ հիմավորել ասված գովեստի խոսքերը կամ անելիքները, փորձում էին լուծել լլխնդիրները՝ միմյանց օգնելով, բացատրելով, սովորեցնելով:

Ուրախալի էր նաև, որ մրցակցում էին միմյանց հետ այն աշակերտները, ովքեր ավելի թույլ կարողունակություններ ունեին:Նրանք փորձում էին գոհացնել, ակտիվացել էին, միմյանց տալիս էին հարցեր, ակնկալում պատասղաններ:Աշակերտները կարողացան վերլուծել, քննարկել, համադրել, համեմատել:Տրվեց կարճ թեստ, հետո թեստային այս տիպը պահանջում է ճիշտ և հիմնավոր պատասխաններ, որպեսզի որոշվի աշակերտների ընկալման աստիճանը: Այս երկու դասերի ընթացքում, ես մասամբ հասա վերջնարդյունքների, որի շրջանակներում աշակերտներիս մոտ շտկվեց խոսքը, կարողացան կազմել փոքրիկ տեքստեր, սովորեցին գրել ազատ շարադրանք:Ընդանուր առմամբ այս լյչորս դասերը հաջողված էին, բայց դեռևս մնացել են անելիքներ,

որոնք ավելի հետաքրքիր և արդյունավետ կդարձնեն ուսուցումը:

## ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով <<Ձևավորող գնահատման ազդեցությունը , նյութի բարելավման վրա համագործակցային ուսուցման տեխնոլոգիայով >>թեմայի վրա ինձ համար լուծեցի մի շարք խնդիրներ, որոնք ավելի դյուրին կդարձներ իմ հետագա աշխատանքը:

Վերանշված օգտագործվող մեթոդներն ու դասի տիպերը շատ արդյունավետ էին: Հետազոտական աշխատանքի շրջանակներում կազմակերպվեցին դասալսումներ, կազմվեցին սանդղակներ և՛ գործընկերներիս, և՛ աշակերտների փոխադարձ գնահատումների համար (Տես հավելվածը): Ես նույնպես կատարեցի դասալսումներ, որոնք ինձ համար շատ ուսուցողական էին:

Կազմակերպվեցին առողջ և հետաքրքիր քննարկումներ, խոսեցինք դասիս ուշեղ և թույլ կողմերի մասին, նշվեցին մասնակի թերացումներ: Հաճելի է, որ դասիս մեջ կային օգտագործված տեխնոլոգիաներ և դասի տիպեր, որոնք գործընկերներս հավանել էին և դրանք նույնպես կկիրառեն:
Ձևավորող գնահատման շրջանակներում գործածվեցին բանավոր հարցումներ, տնային աշխատանքներ, գրեցինք թեստեր, արվեցին քննարկումներ և վերլուծություններ:

Փաստեմ, որ իմ հետազոտական աշխատանքին օգնեցին նաև աշակերտներս՝ VI դասարանցիները, ովքեր ակտիվություն և պատասխանատվություն դրսևորեցին բոլոր դասերին: Դասալսումները փաստեցին, որ աշակերտները պատկերացնում են ձևավորող գնահատականը, որը փաստում է ներքոհիշյալ սանդղակը: Դասարանում սովորում են 26 աշակերտներ:20-աշակերտի հետ մենք կատարեցինք հետաքրքիր, բովանդակալից աշխատանք:

| | | | |
|---|---|---|---|
| | Գնահատում | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| 10 աշ | 13աշ | 15աշ | 20աշ |
| ԴԱՍԱԺԱՄ 1 | ԴԱՍԱԺԱՄ 2 | ԴԱՍԱԺԱՄ 3 | ԴԱՍԱԺԱՄ 4 |

Փորձեցինք համատեղ լուծել առաջացած խնդիրները՝ ընթերցանություն, խոսքի կառուցում, սամունք, ձևավորող գնահատման ընկալում:

Իմ դիտարկումներով 26 աշակերտներից միայն 10 աշակերտ էին առաջին դասին ակտիվ մասնակցում:

Վերջին դասին արդեն արդյունքը այլ էր: Դասարանի 26 աշակերտներից 5-ը թույլ կարողունակություններ ունեցող աշակերտներ էին, բայց երեքն արդեն առաջընթաց ունեին, միայն 2-ը ցածր արդյունքներ գրանցեցին, որը և սկիզբ է դնելու նորանոր անելիքների, շտկումներին, ինքնակրթությանը:






## Եզրակացություն

Ամփոփելով կատարած հետազոտական աշխատանքը, ես եկա այն եզրակացության, որ յուրաքանչյուր առաջադրված խնդրի լուծման համար, պետք է հիմնավոր ուսումնասիրություններ կատարել, փնտրել հնարավոր լուծման տարբերակներ, ընտրել և ներմուծել ճիշտ տարբերակներ և գնահատել այն: Նախաքանում ես առաջ էի քաշել ձևավորող գնահատման հետ կապված անելիքներս, ճշտել, հիմնավորել, փաստարկնել բերել՝ ակնկալելով հետևյալ վերջնարդյունքը, որ գնահատման այս ձևը կիրառելի լինի ավելի հաճախ իմ գործունեության մեջ և բարելավի նյութի յուրացումը:

Ընտրած նոր մեթոդները շատ օգնեցին ինձ, օգնեց նաև վերապատրաստման այս դասընթացը, որպեսզի ինձ համար հասկանալի և կիրառելի լինի ձևավորող գնահատումը:

Գործընկերներիս դասալսումներից եզրահանգումներ անելով, ինձ թվում է, որ հաս վերջնարդյունքիս, բայց դա չի նշանակում, որ չկան անելիքներ: Դրանք միշտ կան և

յուրաքանչյուրս պետք է հետագայում էլ կատարի հիմնավոր, բազմաբնույթ ու բազմակողմանի աշխատանք: Գործընկերներիս դասալսումները, խորհուրդները, համատեղ և համագործակցային աշխատանքն ունեցավ իր անգնահատելի և կարևորդերը ուսուցման ընդացքում նպատակիս հասնելու համար:

## Գրականության ցանկ


1. Սովորողների գնահատման հայեցակարգ ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն: Երևան 2005
2. Պոլոնսկի Վ. Մ. <<Դպրոցականների գիտելիքներիգնահատումը>>, Երևան <<Լույս>>, 1983թ
3. <<Կզնակ հիմնադրամ>>, գնահատման, մշակման և զարգացման բաժնի
4. մասնագետներ, հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգկրթության պետական չափորոշիչ (Երևան, 2004)
5. Աստվածատրյան Մ.Գ. և ուրիշներ <<Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը>>, Այռեքս, Երևան 2007
6. ՀՀ ԿԳ նախարարություն: Կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինսիտուտ:<<Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց>>, Երևան 2007

Հավելված 1
Դասի պլան 1

Ուսուցիչ՝
Ա.Կիրակոսյան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Մայրենի | Ամսաթիվ | 06.10.22 | Կիսամյակ | 1 | Դասարան | 6 |
| Թեմա՝ | Եղիշե Չարենցի <<Մորս համար գազել >> բանաստեղծությունը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | *Դասագիրք, տետր, բառատետրեր, Եղիշե Չարենցի բանաստեղծությունների ժողովածու,* | | | | | | |
| Դասի | | | | | | | |

| | |
|---|---|
| նպատակը` | իմանալ<br>1. Կենսագրական տեղեկություններ Եղ.Չարենցի մասին<br>2. Ստեղծագործության բովանդակությունը<br>3. Գնահատողական վերաբերմունք ունենա հեղինակի վերհիշի հանդեպ |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| Վերջնարդյունքները | *կարողանա*<br>1. *Ներկայացնել Եղ. Չարենցի կենսագրական տվյալները*<br>2. *Գեղեցիկ վերարտադրել բանաստեղծության բովանդակությունը*<br>3. *Վերհանել ստեղծագործության հիմնական գաղափարը* |

| Գործողություններ(ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն *Աշակերտներ* | Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ* | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդ (ներ) |
|---|---|---|---|---|
| Նախապատրաստական մաս 2ր<br>Խթանման փուլ 5-7ր<br>Իմաստի ընկալման փուլ 15-20ր<br>Կշռադատման փուլ 5-10ր<br>Տնային աշխատանք | *Գաղափարային բովանդակության շուրջ ինխնուրույն, խմբային աշխատանք: խմբային աշխատանք, տրված հանձնարարության վրա:* | Համառոտ ներկայացում Չարենցի կյանքի ու գործունեության մասին: Աշակերտների հետ վեր հանել հեղինակի համար առանցքային հիշողությունները: | *Գտնել ու դուրս գրել ծեզ դուր եկած արտահայտությունները: Համեմատիր բանաստեղծությունները, նշելով նմանություններն ու տարբերությունները: Ի՞նչ բառեր ու բառակապակցություններ* | *Մտագրոհ Հարց ու պատասխան* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| քի<br>հանձնար<br>արման<br>փուլ 3ր<br>Ավարտ<br>1ր | | | *գիտես,<br>որոնցում<br>հանդիպում<br>են հայր ու<br>մայր<br>բառերը<br>:Համեմատի՛ր<br>դրանք:* | |
| Տնային | *Բառային աշխատանք բաժնից 4,5 էջ 30* | | | |

## Հավելված 2
## Դասի պլան 2

Ուսուցիչ Ա. Կիրակոսյան

| Առարկա՝ | Մայրենի | Ամսաթիվ | 11.10. 22 | Կիսամյակ | 1 | Դասարան | 6 |
|---|---|---|---|---|---|---|---|

| | |
|---|---|
| Թեմա՝ | Հովհաննես Շիրազ <<Մայրս, փոքրիկ, մայրս խեղճ >> բանաստեղծությունն կարդալ և սովորել անգիր: |
| Օգտագործվող նյութեր՝ | |
| Դասի նպատակը՝ | Աշակերտները պետք է իմանա հատվածներ Հովհաննես Շիրազի կենսագրությունից: 2. Իմանա մորը նվիրված Հովհաննես Շիրազի բանաստեղծությունների շարքի մասին: 3.Զարգացնել արտահայտիչ ասմունքելու տեխնիկան: 4.Համեմատել Ե. Չարենցի և Հովհ. Շիրազի բանաստեղծությունները: |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| Վերջնարդյունքները | *1.Մտապահել Հովհաննես Շիրազի կենսագրության որոշ հատվածներ: 2.Կարողանան ներկայացնել <<Հուշարձան մայրիկիս>> շարքը: 3. Ներկայացնել բանաստեղծության բովանդակությունն:* |

| Գործողություններ(ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br>*Աշակերտներ* | Ուսումնական գործունեություն<br>*Ուսուցիչ* | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդ (ներ) |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խթանում - Դասարանը բաժանել 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալ հարցադրումներ (Պատասխան 3 րոպե): Իմաստի ընկալում- Տրվում են հետևյալ հարցերը՝ ա) Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Հովհաննես Շիրազը: | *Համեմատում են Ե. Չարենցի և Հովհ. Շիրազի բանաստեղծությունները* | Յուրաքանչյուր խմբին տալ հարցադրումներ | *Ի՞նչ բառերով է ներկայացնում Հովհաննես Շիրազը մորը:* | *Քառաբաժան Ձնագնդի* |
| Տնային | *հանձնարարում եմ համացանցից ընտրել ստեղծագործության համապատասխան երաժշտություն:* | | | |